ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/16Շ-1

ք. Երևան «22» օգոստոսի 2019թ.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունները կատարող Հ. Բատիկյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Խաչհար>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Ավագյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ139+000-կմ142+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝

ա) առաջին չափաբաժնի մասով պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 120 օր, բայց ոչ ուշ, քան 10.12.2019թ.:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետ է սահմանվում պատվիրատուի կողմից ողջ ծավալով աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 3 տարին:

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար

պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 300 000 000 (երեք հարյուր միլիոն) << դրամ, որից 50 000 000 (հիսուն միլիոն) << դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական)

տոկոսի չափով:[43] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[44]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

---

[43] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

[44] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

'Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3, ՀՀ կենտրոնական գանձապետարան ՀՎՀՀ 02578338 Հ/Հ 900011025823	<<Խաչհար>> ՍՊԸ ՀՀ ք.Երևան, Հովսեփյան 95Ա <<Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ Արմենիա մ/ճ Հ/Հ 220410124014000 ՀՎՀՀ 00018682
/ստորագրություն/ Կ.Տ	/ստորագրություն/ Կ.Տ

Հավելված թիվ 1
«22» օգոստոսի 2019 թ. կնքված
ՏԿԵՆ-ՀԲՄՍՇՁԲ-2019/16Շ-1 ծածկագրով պայմանագրի

ՁԱՓԱԲԱԺԻՆ 1
ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ139+000-կմ142+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքների

/ՀՀ հազ. դրամ/

NN	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ.	Ծավալը	Միավորի արժեքը*	Ընդհանուր արժեքը
1	2	3	4	5	6
	I. Հողային աշխատանքներ				
1	Հողային պաստառի քանդում (10eIV կարգի բնահող) էքսկ. 0.65մ3 շ.տ. բարձում ա/հ տեղափոխում լցակույտ 5 կմ	$մ^3$	140.736	2.227	313.419
2	Կողային առուների մաքրում	գծ.մ	1791	0.557	997.587
3	Կողային առուների իրականացում (10eIV կարգի բնահող) էքս. 0,65մ3 շ.տ. բարձում ա/հ և տեղափոխում լցակույտ 5 կմ	$մ^3$	192	2.227	427.584
	II. Կողնակներ				
1	Կողնակների լրացում ավազային բնահողով հմիջ.=5սմ	$մ^2$	7128.5	0.461	3 286.239
	III. Երթևեկային մաս				
1	Փոսային նորոգում h=3 - 5 սմ	$մ^2$	362	5.284	1 912.808
2	Փոսային նորոգում հիմքով. - Խճային հիմքի տեղադրում h=8-16 սմ բիտումի 4.12տ/1000$մ^2$ տարածումով - Խոշորահատիկ ա/բ h=6 սմ	$մ^2$	5485	10.844	59 479.340
3	Ճաքալցում	գծմ	5800	0.412	2 389.600
4	Հարթեցնող շերտ $h_{միջ}$= 3 սմ	տ	670.3	46.612	31 244.151
5	Ավազակոպճային շերտ ա/բ h=10 սմ	$մ^2$	386.55	0.566	218.787
6	Խճային հիմքի տեղադրում h=16 սմ բիտումի 4.12տ/1000$մ^2$ տարածումով	$մ^2$	386.55	3.660	1 414.773
7	Խոշորահատիկ ա/բ h=6 սմ	$մ^2$	386.55	6.070	2 346.359
8	Մանրահատիկ ա/բ h=5 սմ	$մ^2$	24156.65	5.550	134 069.408
	IV. Իջատեղեր				
1	Հողային պաստառի քանդում բուլդոզերով տեղափոխում մինչև 10 մ բարձում էքս. 0,65$մ^3$ շ.տ. ա/հ և տեղափոխում լցակույտ 5 կմ	$մ^3$	16	2.160	34.560
2	Խրամուղու կառուցում էքս. 0,65$մ^3$ շ.տ. բարձում ա/հ և տեղափոխում լցակույտ 5 կմ	$մ^3$	2.64	2.227	5.879
3	Նույնը տեղում կուտակելով հետադարձ լիցքի համար	$մ^3$	4.48	0.725	3.248
4	Նույնը ձեռքի աշխատանքով	$մ^3$	0.8	5.763	4.610
5	Հողային պաստառի հարթեցում բուլդոզերով	$մ^2$	340.42	0.019	6.468
6	Ավազակոպճային շերտ h=10սմ (խողովակների տակ)	$մ^3$	0.99	5.657	5.600
7	Մետաղական d=0.325 մ մետաղական խողովակների (□=5մմ) տեղադրում մուտքերում (1գծմ - 39.5 կգ)	գծմ	22	29.284	644.248
8	Գլխամասերի կառուցում միաձույլ բետոն B-20	$մ^3$	0.52	113.231	58.880
9	Գլխամասի ջրամեկուսացում	$մ^2$	4.28	1.294	5.538
10	Խողովակի ջրամեկուսացում	գծմ	20.8	1.946	40.477
11	Հետադարձ լիցք ձեռքով	$մ^3$	5.28	1.972	10.412
12	Խճային հիմք $h_{միջ}$=12սմ բիտումի տարածումով 4.12տ/1000$մ^2$	$մ^2$	340.42	3.178	1 081.855
13	Մանրահատիկ ա/բ h=4սմ	$մ^2$	531.17	4.456	2 366.894

	V. Վաքեր և եզրաքարեր				
1	10 e IV բնահողի քանդում էքս. 0,65մ3 շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 5 կմ	մ³	197.225	2.227	439.220
2	10 e IV բնահողի քանդում ձեռքով բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 5 կմ	մ³	20.2	7.958	160.752
3	Մետաղական d=0.219 մ խողովակների ապոմոնտաժում և վերադարձ սեփականատիրոջը	գծմ	22	1.031	22.682
4	Ավազակոպճային շերտ h=10սմ (վաքերի տակ)	մ³	43.485	6.265	272.434
5	30x34սմ վաքերի տեղադրում	գծմ	669	20.717	13 859.673
6	Վաքերի ջրամեկուսացում	մ²	508.44	1.295	658.430
7	Գոյություն ունեցող ա/բ ծածկի քանդում $h_{միջ}$=10 սմ ձեռքով բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 5 կմ	մ³	5.3	8.404	44.541
8	Ճան. հագուստի (խճային հիմքի) քանդում ձեռքով բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 5 կմ	մ³	10.6	2.777	29.436
9	Հողային պաստառի քանդում (10eIV) ձեռքով բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 5 կմ	մ³	11.16	7.958	88.811
10	Ավազակոպճային շերտ h=10սմ (վաքերի տակ)	մ³	10.92	6.265	68.414
11	Б-2-20 վաքերի տեղադրում	գծմ	168	13.831	2 323.608
12	Անձրևաընդունիչի պատի քանդում (բետոն) ձեռքով, բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 5.0 կմ (0.2x0.2x0.5մ)	տ	0.048	69.167	3.320
13	Վաքերի միացում գործող անձրևաընդունիչին	հատ	1		
14	Ծածկի վերականգնում. - խճային հիմք h=16 սմ բիտումի 4.12տ/1000մ² տարածումով - խոշորահատիկ ա/բ h=6 սմ	մ²	25.2	9.564	241.013
15	Անվտանգության բետոնե եզրաքարերի (15x30սմ) տեղադրում (100գծմ - 1.5մ³, B-15)	գծմ	355	7.468	2 651.140
	VI. Ջրընդունիչ և մետ. ցանց L=10 մ				
1	Փոսորակի փորում 10eIV կարգի բնահողում էքս.0,65մ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 5 կմ	մ³	6.0	2.227	13.362
2	Փոսորակի փորում 10eIV կարգի բնահողում ձեռքով, կողքի կուտակումով	մ³	1.6	5.763	9.221
3	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ³	0.94	6.265	5.889
4	Միաձույլ ե/բ ջրընդունիչ վաք (բետոն B-20) ամրան ∅14մմ A500c - 100.02 կգ:	մ³	3.48	131.822	458.741
5	Ցանցի իրականացում ամրան ∅25մմ A500c - L=57.6 մ, P=221.93 կգ Անկյունակ L 100x10մմ - L=20.0 մ, P= 302.0 կգ Անկյունակ L 90x9մմ - L=30.4 մ, P=370.88 կգ	կգ	894.81	0.885	791.907
6	Քսվածքային ջրամեկուսացում	մ²	12.0	1.296	15.552
7	Հետլիցք ձեռքով	մ³	1.6	1.972	3.155
	VII. Ցամքուրդային շերտի կառուցում				
1	Գոյություն ունեցող ա/բ ծածկի և հողային պաստառի քանդում էքս. 0.65 մ3 շ.տ. տեղափոխում լցակույտ 5 կմ հեռ. վրա:	մ³	81.2	2.227	180.866
2	Նույնը տեղում կուտակելով հետադարձ լիցքի համար	մ³	10.66	0.726	7.739
3	Ցամաքուրդի իրականացում. - քար - 63.3 մ³, - խճային շերտի տեղադրում $h_{միջ}$=16 սմ 59.5 մ² - 9.52մ³	գծմ	35.0	19.858	695.030

4	Ծածկի վերականգնում. - խճային հիմք h=16 սմ բիտումի 4.12տ/1000մ2 տարածումով - խոշորահատիկ ա/բ h=6 սմ	մ^2	31.76	9.564	303.753
5	Հետադարձ լիցք ձեռքով	մ^3	10.66	1.972	21.022
	VIII. Արգելափակոցներ				
1	Նոր մետաղական արգելափակոցների տեղադրում	գծմ	1664	24.270	40 385.280
2	C-1 տիպի պլաստիկ ուղղորդ սյուն»ՌՇ տեղադրում	հատ	50	5.779	288.950
3	Գոյություն ունեցող արգելափակոցների թիթեղի ներկում	մ^2	159.8	1.091	174.342
4	Գոյություն ունեցող արգելափակոցների մետաղական սյուների ներկում	մ^2	18.48	1.595	29.476
5	Գոյություն ունեցող արգելափակոցների ե/բ սյուների ներկում	մ^2	42.6	0.748	31.865
6	Գոյություն ունեցող ե/բ արգելափակոցների ներկում	մ^2	19.5	0.748	14.586
7	Գոյությունունեցող սյուների ապոմոնտաժում տեղափոխում լցակույտ 5 կմ հեռ. վրա:	հատ	32	4.581	146.592
8	Գոյություն ունեցող պարապետների սվազ ցեմենտա - ավազային շաղախով	մ^2	32.8	2.555	83.804
9	Գոյություն ունեցող պարապետների ներկում	մ^2	170.24	0.748	127.340
	IX. Կամուրջներ				
1	Հունի մաքրում ելքում ձեռքի աշխատանքով , բարձում ա/հ և տեղափոխում լցակույտ 5.0 կմ	մ^3	1.5	7.958	11.937
2	Հունի մաքրում մուտքում ձեռքի աշխատանքով , բարձում ա/հ և տեղափոխում լցակույտ 5.0 կմ	մ^3	2	7.958	15.916
3	Հունի մաքրում կամուրջի տակ ձեռքի աշխատանքով, բարձում ա/հ և տեղափոխում լցակույտ 5.0 կմ	մ^3	6	7.958	47.748
4	Ելքում գլխադիրի կառուցում միաձույլ բետոնով B20 F100 2.0x0.6x0.4	մ^3	0.48	68.375	32.820
5	Մուտքում պարապետի կառուցում միաձույլ բետոնով B20 F100 5x0.6x0.4	մ^3	2.4	111.688	268.051
	X. Խողովակների նորոգում				
1	Հունի մաքրում մուտքում ձեռքի աշխատանքով , բարձում ա/հ և տեղափոխում լցակույտ 5.0 կմ (10eIV բնահող)	մ^3	8.2	7.958	65.256
2	Մուտքում գլխամասի իրանի կառուցում միաձույլ բետոնով B20 F100 3x1.6x0.3	մ^3	1.44	113.222	163.040
3	Մուտքում գլխադիրի բարձրացում միաձույլ բետոնով B20 F100 1.2x0.6x0.4	մ^3	0.288	68.368	19.690
4	Մուտքում ջրհորի պատերի սվաղում 5 սմ հաստությամբ ց/ավազային շաղախով	մ^2	3.13	3.412	10.680
	XI. Մետ. d=820մմ խողովակների կառուցում				
1	Հող. աշխատանքներ (10eIV) խողովակի փոսորակների փորման համար էքս.1,0մ^3 բարձում ա/հ և տեղափ. լցակույտ 5 կմ հեռ. վրա	մ^3	53.26	2.153	114.669
2	Խողովակների ելքի հատվածում գոյություն ունեցող հենապատի քանդում հետահատ մուրճով , բարձում ա/հ և տեղափ. լցակույտ 5 կմ հեռ. վրա	մ^3	1.25	27.696	34.620
3	Հող. աշխատանքներ (10eIV) խողովակի փոսորակների փորման համար էքս.1,0մ^3 կողքի վրա կուտակելով հետադարձ լիցքի համար	մ^3	59.81	0.699	41.807
4	Ավազակոպճային նախապ. h=10սմ	մ^3	0.52	6.269	3.260
5	Խճային հիմք h=30սմ	մ^3	22.49	5.339	120.074
6	Գլխամասի կառուցում միաձույլ բետոնից B20 F100 հիմքեր - 3.74 մ^3 իրաններ - 2.48 մ^3	մ^3	6.22	113.222	704.241

7	Որմնակապային ամրաններ Ø16 A500c l=134սմ	կգ	8.48	0.795	6.742
8	Մետաղական ժարտ=820մմ խողովակի տեղադրում 1գծմ=240 կգ, պատի հաստ. 7մմ	գծմ	34.6	154.922	5 360.301
9	Կաթի և հենակային ատամի միաձույլ բետոն B20 F100	մ³	0.72	83.292	59.970
10	Խողովակի քսվածքային ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումով	գծմ	33	4.908	161.964
11	Բետոնի քսվածքային ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումով	մ²	21.84	1.295	28.283
12	Հետադարձ լիցք բուլդոզերով (10eIV)	մ³	54.81	0.877	48.068
13	Հետադարձ լիցք ձեռքի աշխատանքով (10eIV)	մ³	5	1.972	9.860
14	Հենապատի վերականգնում միաձույլ բետոնով B20 F100	մ³	0.704	68.375	48.136
15	Ծածկի վերականգնում. - Խճային հիմք h=16 սմ բիտումի 4.12տ/1000մ² տարածումով - Խոշորահատիկ ա/բ h=6 սմ	մ²	33	9.564	315.612
	XII Գաբիոնային շարվածք				
1	Գաբիոնների համար փոսորակի փորման հողային աշխատանքներ (10eIV բնահող) 0.65մ³ շերեփ տարողությամբ էքսկավատորով գրունտի կողքի պահեստավորումով:	մ³	81.7	0.726	59.314
2	Գոյություն ունեցող ծածկի քանդում հետահար մուրճով , բարձում ձեռքով ա/հ տեղափոխում լցակույտ 5.0 կմ	մ³	0.2	8.341	1.668
3	Հատակի համահարթեցման աշխատանքներ ձեռքով:	մ²	23	0.392	9.016
4	Գաբիոնային շարվածք 1x1x0.5 (քար) :	մ³	45	28.643	1 288.935
	Հիմնակմախք d=6.5 մմ, 1գծմ=0.260 կգ, 1հատ=12.3գծմ (1107 գծմ/ 288 կգ)				
	Ցանցը ամրակով d=3.0 մմ,1մ² =1.445 կգ, 1 հատ=4 մ² (360մ²/520.2կգ)				
	Գաբիոններին կապող մետաղալար d=3.0մմ,1հատ=1.2գծմ,1 հատ=0.0665կգ (108գծմ/6.0կգ)				
5	Նախապես պահեստավորված գրունտի հետլիցք 0.65մ³ շերեփ տարողությամբ էքսկավատորով, շերտ-շերտ, խտացում պնևմատուփանով:	մ³	35.1	1.507	52.896
6	Ավազակոպճային շերտ ա/բ h=10 սմ	մ²	4	0.539	2.156
7	- Խճային հիմք h=16 սմ բիտումի 4.12տ/1000մ² տարածումով - Խոշորահատիկ ա/բ h=6 սմ	մ²	4	9.571	38.284
8	Ավելացած գրունտի բարձում էքս. 0,65մ3 շ.տ. ա/հ և տեղափոխում լցակույտ 5 կմ	մ³	46.6	2.027	94.458
				Ընդհանուրը	316 260.138

*Միավորի արժեքը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ «Շահույթը» 11% և ԱԱՀ-ն 20%

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀԿՀՀ 02578338
ՀՎՀ 900011025823

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Խաչհար>> ՍՊԸ

ՀՀ ք.Երևան, Հովսեփյան 95Ա
<<Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ Արմենիա մ/ճ
ՀՎՀ 22041012401400
ՀԿՀՀ 00018682

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
«22» օգոստոսի 2019 թ. կնքված
ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2019/16Շ-1 ծածկագրով պայմանագրի

ՁԱՓԱԲԱԺԻՆ 1
ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ139+000-կմ142+000 հատվածի հիմնանորոգման աշխատանքների

No	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		սկիզբը	ավարտը
0	Լաբորատոր փորձարկումներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 120 օր հետո
1	Հողային աշխատանքներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 60 օր հետո
2	Երթևեկելի մաս	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 100 օր հետո,
3	Իջատեղեր	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 100 օր հետո,
4	Կողնակների իրականացում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 100 օր հետո,
5	Վաքերի և անվտանգության եզրաքարերի տեղադրում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 70 օր հետո,
6	Ձրընդունիչներ մետաղական ցանցով	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 70 օր հետո,
7	Ցամքուրդի իրականացում, L=35մ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 70 օր հետո,
8	Հավաքովի ե/բ D=0.75 մ խողովակի նորոգում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 60 օր հետո,
9	Մետ. D=820 մմ խողովակների տեղադրում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 60 օր հետո,
10	Կամուրջների նորոգում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 80 օր հետո,
11	Անվտանգության էլեմենտներ	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո	Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 120 օր հետո,
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ		**Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո**	**Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց 120 օր հետո, բայց ոչ ուշ, քան 2019 թ. դեկտեմբերի 10-ը**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02578338
ՀՀ 900011025823

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Խաչհար>> ՍՊԸ

ՀՀ ք.Երևան, Հովսեփյան 95Ա
<<Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ Արմենիա մ/Ա
ՀՀ 22041012401400
ՀՎՀՀ 00018682

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«22» օգոստոսի 2019 թ. կնքված
ՏԿԵՆ-ՀԲՄՇՁԲ-2019/16Շ-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231177/35		...	...	...	...	...	...	------	120 000 000.0	120 000 000.0	300 000 000.0	300 000 000.0	300 000 000.0	**300 000 000.0**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՎՀՀ 02578338
Հ/Հ 900011025823

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Խաչհար>> ՍՊԸ

ՀՀ ք.Երևան, Հովսեփյան 95Ա
<<Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ Արմենիա մ/ճ
Հ/Հ 220410124014000
ՀՎՀՀ 00018682

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
« » օգոստոսի 2019 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » օգոստոսի 2019 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն